ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼՂԻՄ XX ԳՈՒՄԱՐՄԱՆ ՍՈՎԵՏԻ VIII ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Հուլիսի 12-ին տեղի ունեցավ ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 20-րդ գումարման սովետի 8-րդ նստաշրջանը։

Նստաշրջանը բացեց ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետի գործկոմի նախագահի պաշտոնակատար Շ. Մ. Պետրոսյանը։

Նստաշրջանը քննարկեց հետևյալ հարցերը.

1. Պարենային ծրագրի իրականացման և մարզի բնակչությանը սննդամթերքների մատակարարման ուղղությամբ ԼՂԻՄ ագրոարդյունաբերական կոմիտեի աշխատանքի մասին։

2. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի՝ Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից դուրս գալու հռչակման մասին։

3. Կազմակերպական հարցեր։

Օրակարգի առաջին հարցի առթիվ զեկուցումով հանդես եկավ ԼՂԻՄ ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահի տեղակալ, դեպուտատ Վ. Ա. Զաքիյանը։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ժողովրդական դեպուտատների Մարտակերտի շրջանային սովետի գործկոմի նախագահ, դեպուտատ Վ. Ս. Զավադյանը, Ասկերանի շրջանի Ն. Ստեփանյանի անվան կոլտնտեսության տրակտորավար, դեպուտատ Ս. Գ. Ապրեսյանը, մարզսպառմիության նախագահ, դեպուտատ Ի. Ե. Գրիգորյանը, Մարտունու շրջանային ագրոարդյունաբերական միավորման նախագահ Ռ. Ս. Ղարիբյանը, ագրոարդբանկի մարզային բաժանմունքի կառավարիչ, դեպուտատ Ս. Ա. Թեվոսյանը, Մարտակերտի շրջանի Լենինի անվան սովխոզի խաղողագործ, դեպուտատ Ա. Ա. Հակոբյանը, ԼՂԻՄ 60-ամյակի անվան Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի դիրեկտոր Բ. Ս. Առուշանյանը, Մարտակերտի շրջանի Մեծշենի սովխոզի բանվորուհի, դեպուտատ Լ. Ց. Ղահրամանյանը։

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ ելույթ ունեցան Ստեփանակերտի կաթի կոմբինատի դիրեկտոր, դեպուտատ Ա. Մ. Մատրոյանը, ՍՍՀՄ 50-ամյակի անվան Ստեփանակերտի կոշկի ֆաբրիկայի ձևող-բանվորուհի, դեպուտատ Տ. Վ. Սոբոլևան, Ստեփանակերտի № 91 շինվարչության էլեկտրիկ, դեպուտատ Պ. Մ. Սաղյանը, հանրապետության գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար, դեպուտատ Վ. Ս. Հակոբյանը, Ժողովրդական կրթության մարզային բաժնի վարիչ, դեպուտատ Վ. Ս. Հայրապետյանը, Մարտունու շրջանի Կ. Մարքսի անվան կոլտնտեսության գլխավոր զոոտեխնիկ, դեպուտատ Է. Ա. Աղաբեկյանը, Ստեփանակերտի սննդի ձեռնարկության բանվորուհի, դեպուտատ Ն. Շ. Ավանեսյանը, Ստեփանակերտի արտադրական ավտոտրանսպորտային միավորման գլխավոր դիրեկտոր Բ. Վ. Դաղամյանը, Մարտունու շրջանի Լ. Միրզոյանի անվան կոլտնտեսության խաղողագործ, դեպուտատ Ռ. Գ. Գրիգորյանը, Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի հաստոցավար, դեպուտատ Տ. Շ. Ավանեսյանը, Ասկերանի շրջանի «Հաղթանակ» կոլտնտեսության կթվորուհի, դեպուտատ Ժ. Գ. Մովսիսյանը, անհատական թոշակառու, դեպուտատ Ե. Ա. Համբարձումյանը, Բաքվի 26 կոմիսարների անվան Ղարմետաքսկոմբինատի ջուլհակուհի, դեպուտատ Ս. Ա. Գրիգորյանը, № 2718 ավտոշարասյան մոտորավար-փականագործ, դեպուտատ Ս. Ս. Ամիրխանյանը, Ստեփանակերտի հացի գործարանի բանվորուհի, դեպուտատ Մ. Օ. Միրզաբեկյանը, սոցիալական ապահովության մարզային բաժնի վարիչ, դեպուտատ Գ. Վ. Սահակյանը։

Քննարկված հարցերի առթիվ նստաշրջանն ընդունեց համապատասխան որոշումներ։

Քննարկելով մարզային սովետի դեպուտատներ Վ. Վ. Օսիպովի և Գ. Ի. Սեպտայի անձնական դիմումները իրենց դեպուտատական լիազորությունները ժամկետից շուտ դադարեցնելու մասին և այլ աշխատանքի անցնելու, մարզի սահմաններից դուրս մշտական բնակության վայրը տեղափոխվելու կապակցությամբ նստաշրջանը դադարեցված համարեց նրանց դեպուտատական լիազորությունները։

Նստաշրջանը հանձնարարեց ժողովրդական դեպուտատների մարզային սովետի գործկոմին դուրս մնացած դեպուտատների փոխարեն մարզային սովետի ընտրություններ անցկացնել Լենինավանի № 74 ընտրական օկրուգում և Ասկերանի № 43 ընտրական օկրուգում։

Նստաշրջանը մարզի սահմաններից դուրս հիմնական բնակավայր տեղափոխվելու կապակցությամբ մարզային սովետի գործկոմի կազմից հանեց Բ. Ս. Կևորկովին և Ա. Ա. Իսագուլովին։